Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի դպրոցական փուլի - 2025-2026 ուստարի
9-րդ դասարան Տևողությունը 90 րոպե

1. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. հանապազ-բյա, հ-գուդ, ան-բեն
2. հյուր-նկալ, լուս-նկա, խոչ-նդոտ
3. քարակո-, սոսա-յուն, անխա-ան
4. նորո-ել, բարվո-ել, պար-ևել

2. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. ճկույ-, խր-ին, թփու-
2. խ-կել, ուր-, կուր-ք
3. զի-ել, զդ-ալ, գո-ի
4. մա-թանք, փո-ք, ա-տոտ

3. Ո՞ր շարքում է բաց թողնված միևնույն տառը:
1. ե-եսուն, գ-ոշ, ա-համարհել
2. խոր-ին, անշնո-ք, հեղ-եղատ
3. ալ-արս, հոգ-արք, ար-առ
4. ա-բասիր, ա-բարիշտ, ա-բավ

4. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով:
1. բերդ (ամրոց), գալ(գնալ), հույն(հայկական)
2. ազատ(արձակ), առ (ժամանակ), նոփ (նոր)
3. գյուղե(գյուղ), սրանից (նրանից), գլուխ(գործոց)
4. ձեռքով(ոտքով), վազել(վազվզել), օր(օրի)

5. Ո՞ր շարքի հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:
1. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԱՆԲԱՆ ՀՈՒՌԻ
2. ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՊԱՐՍԻՑ ԲԱՆԱԿ
3. ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՂՈՒԿԱՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ
4. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ

6. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:
1. բարեկարգ, դեռատի, պտուտակ
2. կուսակից, ծածկոց, ակնաբույժ
3. թխամորթ, փառամոլ, մթնշաղ
4. հանրակառք, ակնդետ, միջուկ

7.Ո՞ր շարքում է դարձվածքի իմաստը սխալ բացատրված:
1. բառերը քամուն տալ- շաղակրատել
2. մաղով ջուր կրել-ապարդյուն, անօգուտ գործ ձեռնարկել
3. երես ծռել- ծաղրել, երեսը ծամածռել
4. ձեռք տալ- շահավետ լինել

8.Նշի՛ր՝ որ շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:
1. վտարանդի-աքսորյալ, վեհերոտ- վեհապանծ
2. քանքար- ձիրք, անուն-հռչակ
3. մեծատուն-հարուստ, ընչաքաղց- աղքատ
4. անօթևան- անապաստան, ոստայն-բնակավայր

9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածանցավոր:
1. փափկամազ, ապօրինի, ծածկամիտ
2. գովեստ, վարդապետ, բարձրագույն
3. ահագին, ազդակ, վերադարձ
4. ինքնագնաց, աճուրդ, վայելուչ

10. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:
1. դրացի, նվիրակ, սենեկապան, շանթարգել
2. ախտածին, ժայռեղեն, արևագալ, հոգևոր
3. վաղորդյան, նորընծա, լուսնկա, դարբնոց
4. ամպշող, ստահակ, եռյակ, սակավապետ

11.Ո՞ր շարքի բոլոր բառերն են պատկանում ա ներքին հոլովման:
1. հայրանուն, հիմնասյուն, հովվաշուն
2. մեծատուն, ձյուն, ցնծություն
3. հաղթասյուն, գարուն, գինետուն
4. քառանկյուն, հրաշամանուկ, դրամատուն

12. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակիներն են կազմվում –եր վերջավորությամբ:
1. սպա, ծխանցք, միջակետ
2. լրագիր, պատշար, կոճղ
3. ակնաբույժ, հենապատ, վագր
4. ականջող, ոտնաձայն, գանձարկղ

13.Ո՞ր շարքում են բայի միայն պարզ ժամանակաձևերը:
1. դուրս եկան, մի՛ նվագեք, չի հեռացել
2. պետք է սովորեք, չի պատմի, վե՛ր կաց
3. պիտի վերադառնամ, կգտնենք, լաց կլինի
4. տանեին, չէր գալու, հարց տվեց

14. Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակբայներ:
1. գյուղեգյուղ, այնքան, ինչպիսի
2. արդեն, նորից, հանկարծ
3. հաճախ, հիմնովին, որտեղ
4. բարեկամաբար, մյուս, որքան

15. Ո՞ր շարքում են միայն որոշյալ դերանունները:
1. մի քանի, ոմանք, մեկմեկու, սրանք
2. ամբողջ, ամեն մեկը, ամենքը, յուրաքանչյուր ոք
3. ոմն, այսպիսի, որտեղ, մեկնումեկը
4. մյուս, ուրիշ, այսինչ, որպիսի

<u>Ուշադրություն:</u> 16-ից 20-րդ առաջադրանքների պատասխանների թվերը նշել աճման կարգով:

16. Նշի՛ր այն բարդ նախադասությունների համարները, որոնց բաղադրիչ նախադասությունները կապվել են հարաբերական դերանուններով:

1. Ուշագրավն այն էր, որ բոլորս հավատում էինք կամ ուզում էինք հավատալ նրա հորինած պատմություններին:
2.Նախքան կդատապարտես, մտածի՛ր արդարացում գտնելու, ներում շնորհելու մասին:
3. Երբ արևը զարթնում է, վարարում են սարի լանջերին կուտակված սառույցներից իջնող առվակները:
4. Ծերունին պատմում էր այն, ինչ արդեն վաղուց հայտնի էր գյուղացիներին:
5. Իմ պատուհանից հիացած նայում էի ծեր հարևանիս, ով ամեն առավոտ մտնում էր իր ծաղկանոցը ու խանդաղատանքով խնամում պարտեզի յուրաքանչյուր թուփ ու ծաղիկ:

17. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնց կազմում բնույթով որոշիչ դերբայական դարձվածներ կան (նախադասությունները կետադրված չեն):

1. Հավանաբս տունը որ գտնվում էր քաղաքից ոչ այնքան հեռու շրջապատված էր մրգատու ծառերով ու գունագեղ թփերով:
2. Երբ երկինքը պատվեց թուխպերով հանգիստ սավառնող ծիծեռնակներն իսկույն սլացան դեպի իրենց բները:
3. Ղեկն ամուր բռնած հմտորեն վարում էր նա իր նավը նույնիսկ ահեղ փոթորիկներիի ժամանակ:
4. Քաղաքից շուտափույթ հեռանալու օրը տղան որոշեց այցելել միայնակ ծերունուն մեկ անգամ ևս առաջարկելով նրան մեկնել իր հետ:
5.Այս մատղաշ ծիրանենին տնկված ուղիղ մեկ տարի առաջ արդեն ծաղկել է:
6.Ամիսներ շարունակ լեռներում թափառողը վերջապես հանգրվանեց այն գյուղում որտեղ ապրել էին նրա նախնիները:

18. Նշի՛ր՝ որ նախադասություններն են կազմությամբ պարզ (նախադասությունները կետադրված չեն):

1. Լեռան լանջին զմրուխտաշող անտառներն էին ներքևում ոսկեծուփ դաշտերը:
2. Նայողին թվում էր ջրերի տակ սուզվել է մի մեռած վանք:
3.Լճի մակերևույթը թվում էր գիրկն էր առել անտառի ծառերն ու բազմերանգ թփերը:
4. Հրացանի ձայնը լսելուն պես արջի քոթոթները իրար հերթ չտալով վախեցած մտան որջը:
5. Վարպետի վաղուց հիմնած բրուտանոցը խոնավ էր հագեցած կավի դուրեկան բույրով:

19.Նախադասություններից որո՞նք են սխալ կետադրված:

1.Այդպես էլ չիմացանք, որ քամին էր նրան բերել հեռու ձորի այդ գյուղը:
2.Սարերից իջնող ջրերը արևամուտին վարարում են, պաղպաջուն աղբյուրները զվարթ երգում:
3. Մոտեցավ խրճիթի դռնակին՝ մտածելով, թե ներսն էլ ամայի է:
4.Շուտով նրանք պիտի բաժանվեին. Լևոնը գնալու էր Մոսկվա՝ սովորելու:
5.Ամեն անգամ այգին մտնելիս՝ մի անորոշ տագնապով ու երկյուղածությամբ էր լցվում ծեր այգեպանի սիրտը:

20.Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված շարահյուսական անդամների պաշտոնները ճիշտ են տրված:

1. Հակոբը մեր խմբի ամենալավ ***խաղացողն*** է: (ստորոգելի)
2. Այդ քաղաքում անսպասելիորեն հանդիպեցի մանկությանս ***ընկերոջը***: (հանգման խնդիր)
3. Ճրագը՝ սեղանին ***դրված***, հազիվ էր լուսավորում մռայլ սենյակի պատերը: (ձևի պարագա)
4. **Լևոնը**՝ որպես լավ մասնագետ, գերազանցում էր բոլորին: (բացահայտիչ)
5. Կռունկները երամ առ երամ անցան Վարդենիսի ***լեռներով:*** (միջոցի խնդիր)
6. Բակունցի հայրենի ոստանը՝ ***Գորիսը***, փոքր, բայց գեղեցիկ քաղաք է: (բացահայտիչ)